

Անմնացորդ մատրից

Տրված է իրական ոչ բացասական թվերի մատրից: Յուրաքանչյուր տողում և յուրաքանչյուր սյունում թվերի գումարը ամբողջ թիվ է: Հարկավոր է մատրիցի տարրերից յուրաքանչյուրը, (եթե նրա արժեքը ամբողջ թիվ չէ) փոխարինել իրենից փոքր ամենամեծ ամբողջ թվով կամ իրենից մեծ ամենափոքր ամբողջ թվով այնպես, որ տողերի և սյուների գումարները մնան անփոփոխ:

Մուտքը

Առաջին տողում տրված են n և m թվերը ($2 \leq n, m \leq 30$): Հաջորդ n տողերից յուրաքանչյուրում տրված է m ոչ բացասական իրական թիվ: Երկու հարևան թվեր իրարից անջատված են մեկ պրոբելով: Մատրիցի թվերը պարունակում են ստորակետից հետո առավելագույնը երկու նիշ:

Ելքը

Ելքում պետք է արտածել ձևափոխած մատրիցը, որում բոլոր թվերը պետք է լինեն ամբողջ և բավարարեն խնդրում նշված պայմանին: Այսինքն, պետք է արտածել n տող, յուրաքանչյուրում m ամբողջ թիվ, թվերն իրարից անջատելով պրոբելներով: Բավական է արտածել որևէ մի լուծում:

Օրինակ

Մուտքը.

3 4

1.2 2.3 3.4 4.1

2.45 3.12 4.18 5.25

11.35 8.58 6.42 1.65

Ելքը.

1 2 3 5

3 3 4 5

11 9 7 1